ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<<11>> **փետրվարի 2014 թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**

Ա.Ադամյան, Ա.Բաղրամյան, Լ.Բարսեղյան, Մ. Գաբոյան, Ա.Գրիգորյան,, Վ.Եդիգարյան , Գ.Թաթարյան, Հ.Խաչատրյան, Հ.Կարապետյան, Տ.Հովհաննիսյան, Վ. Հունանյան, Ն.Մեսրոպյան, Ռ.Մխիթարյան, Է.Մկրտչյան, Վ.Շիրինյան, Մ.Սահակյան, Ա.Վարդանյան

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը, Գ.Մալխասյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Հ.Սարգսյանը, Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, համայնքի ղեկավարի օգնական Ժ.Պետոյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Զ.Եգանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ծրագրերի և վերլուծության բաժնի պետի տեղակալ Մ.Ճարտարյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետ Կ.Բաղալյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա.Կարապետյանը, կրթության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, տրանսպորտի բաժնի պետի ժ/պ Ա.Եղոյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա.Ղազարյանը, քարտուղարության բաժնի պետ Ն.Բարսեղյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝

ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 161-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, 63-րդ հոդվածով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 3-րդ, 5-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2013թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեն հաստատելու մասին>> 161-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը 152343,1 (մեկ հարյուր հիսուներկու միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) Հայատանի Հանրապետության դրամ, որից վարչական մաս՝ 151476,9 (մեկ հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր յոթանասունվեց հազար իննը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, ֆոնդային մաս՝ 866.2 (ութ հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել 2012 և 2013 թվականներին ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված ելքերին՝ առկա պարտավորությունների կատարմանը: Վարչական մասի 151476,9 (մեկ հարյուր հիսունմեկ հազար չորս հարյուր յոթանասունվեց հազար իննը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ մնացորդից 27103,3 (քսանյոթ միլիոն մեկ հարյուր երեք հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը թողնել վարչական մաս, 10874,2 (տաս միլիոն ութ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը որպես սուբվենցիայի մնացորդ վերադարձնել Հայաստանի

Հանրապետության պետական բյուջե, իսկ 114365.6 (մեկ հարյուր տասնչորս միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս,
ա. Եկամուտները՝ 3093281,6 (երեք միլիարդ իննսուներեք միլիոն երկու հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ
բ. Ծախսեր՝ 3.245.624,7 (երեք միլիարդ երկու հարյուր քառասունհինգ միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ

2. Գյումրի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստաֆոնդի առաջին եռամսյակի նախատեսված 48886,4 (քառասունութ միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամը ուղղել ֆոնդային մաս:
3.Հաստատել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեն եռամսյակային բաշխումներով՝ համաձայն հավելվածներ NN 1-6:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ «ԳՅՈՒՄՐԻԻ ՈՒՍՈՒՄՆԱ - ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի կույրերի միավորման «Գյումրիի ուսումնա–արտադրական ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրությունը՝ (քաղաքապետարանում մուտքագրված 05.02.2014թ. N Գ313 թվագրմամբ) **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի կույրերի միավորման «Գյումրիի ուսումնա-արտադրական ձեռնարկություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատկացնել 40 000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ երաժշտական գործիքների ձեռք բերման համար:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարել գումարի հատկացումը Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու վետերանների խորհրդի նախագահ Աղասի Զավարյանի դիմումը՝ (քաղաքապետարանում մուտքագրված՝ 05.02.2014թ. N Գ312 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու վետերանների խորհրդի աշխատանքները պատշաճ կազմակերպելու նպատակով Գյումրու վետերանների խորհրդի նախագահ՝ Աղասի Զավարյանին հատկացնել ամենամսյա դրամական օգնություն 40 000(քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարել գումարի հատկացումը Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. <<ՎԵՐԱԾՆՈՒՆԴ>> ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարին ուղղված «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպության գրությունը՝ (քաղաքապետարանում մուտքագրված 05.02.2014թ N Գ310 թվագրմամբ) **համայնքի ավագանին որոշում է.**

1. «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնը պատշաճ կազմակերպվածությամբ անցկացնելու նպատակով «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոն» հասարակական կազմակերպությանը հատկացնել 5000000 (հինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին կատարել գումարի հատկացումը Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819)

<<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 16
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱՆ» ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Շիրակի կայազորի լավագույն զինծառայողներին հատկացնել դրամական միջոցներ 800000 (ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4727) « Մշակութային նպաստ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ 3 (ԵՐԵՔ) ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ելնելով Գյումրի համայնքի կարիքների համար անհետաձգելի համարվող թվով 3 (երեք) մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման անհրաժեշտությունից, առաջնորդվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20–րդ հոդվածի 5–րդ կետով և ղեկավարվելով <<Տեղական ինքնկառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 5–րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային միջոցների (երեք մարդատար ավտոմեքենայի) անհետաձգելի համարվող գնումները բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու:

2. Թույլատրել գնումը իրականացնել երկրորդային շուկայից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 16

դեմ – 0

ձեռնպահ – 1 (Լևոն Բարսեղյան)

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԱՆՏՊԱԳԻՐ <<ԹՈՆՐԱԿԵՑԻՆԵՐ>> ՊՈԵՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաշվի առնելով մեծանուն հայոց բանաստեղծ Հովհաննես Շիրազի անտպագիր <<Թոնրակեցիներ>> պոեմի հրատարակման և հանրությանը որպես գրական ժառանգություն ներկայացնելու կարևորությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով բանաստեղծի զավակների գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված՝ 2014թվականի փետրվարի 06-ին Գ-328 թվագրմամբ), <<Հայրապետ հրատարակչության>> ներկայացրած հաշվարկային հաշիվը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Հովհաննես Շիրազի անտպագիր <<Թոնրակեցիներ>> պոեմի հրատարակման հետ կապված տպագրական ծախսերը հոգալու նպատակով բանաստեղծի զավակներին հատկացնել 2000000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/6/1 գործառնական դասակարգման (4727) <<Մշակութային նպաստ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԹՎՈՎ 4 ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԵԿՇԱԲԱԹՅԱ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՆՆԴԻ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի կրթության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանին:

Հ.Սուլթանյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ելնելով Գյումրու համայնքային ենթակայության մանկապարտեզների թվով 160(մեկ հարյուր վաթսուն) աշխատակիցների վերապատրաստման դասընթացները պատշաճ կերպով կազմակերպելու և իրականացնելու, թվով 4 (չորս) դասախոսների մեկշաբաթյա կացության և սննդի ծախսերը հոգալու անհրաժեշտությունից , ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված Կրթության բաժնի պետ՝ Հայկ Սուլթանյանի գրությունը (մուտքագրված 29.01.2014 թ. N Գ 262 թվագրմամբ) ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վերապատրաստման դասընթացները իրականացնող թվով 4(չորս) դասախոսների մեկ շաբաթյա կացության և սննդի ծախսերը հոգալու համար հատկացնել 180,0 (մեկ հարյուր ութսուն) հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 23-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 115-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի

Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ելնելով հարցի հրատապ լուծման անհրաժեշտությունից՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի մարտի 12-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու, աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 23-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

21-րդ տողի 2-րդ սյունակի «10-րդ» թիվը փոխարինել «9-րդ» թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի հոկտեմբերի 12-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու, աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 115-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

4-րդ տողի 2-րդ սյունակի «11-րդ» թիվը փոխարինել «10-րդ» թվով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ և 35-րդ հոդվածների պահանջները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և նրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք - շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

12. ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին կետով, 81-րդ հոդվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի <<Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը հաստատելու մասին>> N 295-Ն որոշումը և Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասերի սխեմաներն ու ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել մրցույթով գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը և պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

13. ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 3-ի <<Գյումրի քաղաքի գլխավոր հատակագիծը և Շիրակի մարզի տարածքային հատակագծման ուրվագիծը հաստատելու մասին>> N 295-Ն որոշումը և Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի կողմից ներկայացված հողամասերի ելակետային տվյալները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի վարձավճարների մեկնարկային չափերը ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման ու տնօրինման կարգը հաստատելու մասին>> N 912-Ն որոշման 34-րդ, 34.2-րդ և 35-րդ կետերի պահանջները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և նրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը վարձակալության տրամադրել տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Հաստատել վարձավճարների չափերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

15. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2014 թվականի հունվարի 16-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» N 52-Ա որոշմամբ առաջարկված հողամասերի օտարման մեկնարկային գները՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 154-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ելնելով հարցի հրատապ լուծման անհրաժեշտությունից՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ինքնակամ կառուցված շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը օտարելու մասին» N 154-Ա որոշման հավելվածի 6-րդ տողում կատարել հետևյալ փոփոխությունը՝ 8-րդ սյունակում «89522» թիվը փոխարինել «44761» թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 36-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 5/13 հասցեով 0,61726 (զրո ամբողջ վաթսունմեկ հազար յոթ հարյուր քսանվեց հարյուր հազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի նվիրատվությունը Գյումրի համայնքի կողմից ընդունելու և նույն հողամասը և Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 3/7 հասցեով 0,353442 (զրո ամբողջ երեք հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր քառասուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին» N 36-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշումից հանել 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 16
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լևոն Բարսեղյան)

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ N 46^{Բ} ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ, ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 46^{Բ} հասցեի կիսակառույց բնակելի տան (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2296621 վկայական) շինարարական աշխատանքներն ավարտելու համար պահանջվում են զգալի ֆինանսական միջոցներ, որի հնարավորությունը տեղական բյուջեն չունի: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Մովսես Խորենացու փողոց N 46^{Բ} հասցեի 221,20 (երկու հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույց բնակելի տունը՝ իր կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 483,0 (չորս հարյուր ութսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասով, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2014 թվականի հունվարի 30-ի թիվ 017 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 221,20 (երկու հարյուր քսանմեկ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին հաստատել 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 483,0 (չորս հարյուր ութսուներեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար 1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2100000 (երկու միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

19. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ ՓՈՂՈՑ, 9/9Ա ՇԵՆՔ, ԹԻՎ 63 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ԲՆԱԿՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի Սայաթ Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականությունը: Նշված բնակարանը 2000 թվականից որպես ծառայողական բնակարան տրամադրվել է քաղաքացի Էդվարդ Մանուկյանին՝ ժամանակավոր օգտագործման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքի կողմից իրականացվում է համայնքապատկան բնակֆոնդի մասնավորեցում նվիրատվության եղանակով և ըստ էության, նշված հասցեով բնակարանը շուրջ 14 տարի բարեխիղճ, բացահայտ և անընդմեջ օգտագործում է քաղաքացի Էդվարդ Մանուկյանի ընտանիքը, նա դիմում է ներկայացրել նշված հասցեով բնակարանը նվիրատվության եղանակով իրեն օտարելու համար:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ մասի, ինչպես նաև Գյումրի համայնքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության պետական հանրային և համայնքային բնակարանային ֆոնդը դրանց վարձակալներին նվիրելու մասին>> N 46-Ա որոշման 3-րդ կետի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի Սայաթ-Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանը հետայսու չօգտագործել որպես ծառայողական բնակարան, այլ ընդհանուր կարգով՝ որպես համայնքապատկան բնակտարածություն:
2. Գյումրի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կազմակերպել Գյումրի համայնքի Սայաթ-Նովա փողոց, 9/9ա շենք, թիվ 63 հասցեով բնակարանի նվիրատվության եղանակով օտարումը քաղաքացի Էդվարդ Մանուկյանին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 16
դեմ – 1 (Լևոն Բարսեղյան)
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին կետով, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Հրապարակային սակարկությունների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Աճուրդով օտարելու նպատակով Հայաստանի Հանրապետության Շրակի մարզի Գյումրու համայնքային սեփականություն հանդիսացող առանձնացված հողամասերի աճուրդի մեկնարկային գներ և պայմաններ հաստատելու մասին» N 137-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ սյունակում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին տողի «3500000» թիվը փոխարինել «2300000» թվով,

2) 2-րդ տողի «2000000» թիվը փոխարինել «1600000» թվով,

3) 3-րդ տողի «400000» թիվը փոխարինել «270000» թվով,

4) 4-րդ տողի «3000000» թիվը փոխարինել «1500000» թվով,

5) 5-րդ տողի «10000000» թիվը փոխարինել «5500000» թվով,

6) 6-րդ տողի «1000000» թիվը փոխարինել «600000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Վ.ՍԱՐԳՍՅԱՆԻ 6Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԵՌՈՒՍՏԱԱՇՏԱՐԱԿԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով ԳԱԼԱ հեռուստաընկերության գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Գրիգորյանի Գյումրու քաղաքապետին ուղղված գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված՝ 2014 թվականի հունվարի 29-ին Գ-261 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել ԳԱԼԱ հեռուստաընկերությունը ներկայացնող <<ՉԱՊ ՔԵՄԻՔԼ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Վազգեն Սարգսյան 6ա հասցեում գտնվող հեռուստաաշտարակի վրա տեղադրել սարքավորումներ: Այդ նպատակով առանձնացված տարածքը տրամադրել վարձակալությամբ՝ ժամանակավոր օգտագործման իրավունքով:
2. Հաստատել վարձավճարի ամսական չափը՝ 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՏՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՊՐՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 183 (ՀԱՐՅՈՒՐ ՈՒԹՍՈՒՆԵՐԵՔ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի ղեկավարին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 183 (հարյուր ութսուներեք) անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, սոցիալապես անապահով քաղաքացիների դիմումների համաձայն ավագանու <<Սոցիալական, առողջապահության և բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի>> կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող ժամանակավոր տնակներում բնակվող թվով 183 (հարյուր ութսուներեք) անձանց տրամադրել դրամական օգնություն՝ 1.830.000 (մեկ միլիոն ութ հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի,
2. Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին՝ հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Թամանյան փողոց 17/2 հասցեի շինությունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28112013-08-0014): Այն կազմում է Թամանյան փողոց 17 հասցեում գտնվող «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպության շենքի անբաժանելի մաս, և որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել կամ օգտագործել համայնքի կարիքների համար:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հունվարի 20-ի N ԱԳ/207-14 գրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաք Գյումրի Թամանյան փողոց 17/2 հասցեի 322,89 (երեք հարյուր քսաներկու ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակության շինությունը և 13,16 (տասներեք ամբողջ տասնվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:
2. Նվիրաբերվող շինությունների կառուցապատման և սպասարկման համար զբաղեցված Գյումրի համայնքին պատկանող 0,024627 (զրո ամբողջ քսանչորս հազար վեց հարյուր քսանյոթ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասն օրենքով սահմանված կարգով տրամադրել անհատույց (մշտական) օգտագործման:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի N 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ,
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի 2-րդ պարբերությամբ, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի պուրակների, զբոսայգիների բարեկարգման, կանաչապատման, այդ վայրերում հանգստի գոտիներ կազմակերպելու նպատակով մրցույթով

կառուցապատման իրավունքով հողամասերի տրամադրման վարձավճարի մեկնարկային չափ սահմանելու մասին>> N 108-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ 2-րդ պարբերության 5-րդ տողի <<30-50 (երեսունից հիսուն)>> թվերն ու բառերը փոխարինել <<70-122 (յոթանասունից հարյուր քսաներկու)>> թվերով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց